

մը տայ Կաթողիկոսին Լեհաստան դալու ծը-
րագրին առնչութեամբ (2) : Նաեւ ինք հա-
յերէն գեղեցիկ նամակ մը կը գրէ : Ճոռոմա-
բան ոճով գովեստներ կը հիւսէ ի պատիւ
Կաթողիկոսին . կը յայտնէ հայ թէ լեհ ժո-
ղովուրդին ուրախութիւնը ի լուր իր ճամ-
բորդութեան ծրագրին դէպի Լեհաստան եւ
Հոռոմ , անոնց տխրութիւնը՝ ճամբորդու-
թեան խափանումին պատճառաւ : Բայց , կը
յարէ՝ միտթարուեցանք լսելով Ձեր քաջա-
ռողջ վիճակը . խնդրեցինք Հ . Պեռնարտովի-
չէն որ Լեհաստանի հայ եկեղեցւոյն առնչ-
ութեամբ եւ իմ հոս դալստեանս մասին Ձե-
զի գրէ : Եւ կը յաւելու . Ես Հոռոմէն հոս չե-
կայ իմ քմահաճոյքովս , այլ երկիցս զիս հը-
րաւիրեցին այս երկրին հայ մեծամեծները ,
որպէսզի հայ վարժարան մը բանամ , ուր
հայերէն դասաւանդուին եկեղեցական բարձ-
րագոյն գիտութիւնները , եւ այսպէս հայե-
րը չուծանան եւ լատին ծէսի չանցնին , միա-
ժամանակ սորվին նախանձախնդրութեամբ
պահել իրենց գեղեցիկ ծէսերն ու սովորու-
թիւնները : Ս . Պապը կ'ուզէ որ Լեհաստանի
բոլոր հայերը Ձեզի հնազանդին եւ հետեւին
իրենց սեփական ծէսին , յապաւելով անկէ
ինչ որ հակառակ է կաթողիկէ դաւանանքին
եւ առաքելական աւանդութեանց , ինչպէս
ընդունած էին Ձեր նախորդը , Փիլիպպոս
Կաթողիկոս (3) եւ բազմաթիւ ուրիշ կաթո-
ղիկոսներ եւ թագաւորներ : Չայս կը գրենք ,

(2) Ibidem 200.

(3) 12 Փետրուար 1653ին :